թագաւորութեան Տիրերեայ կայսեր, եկն 'ի կողմանս Յորդանանու քարոզել աշխարհի ապաշխարութիւն 'ի թողութիւն մեղաց եւ մկրտել զմարդիկ։ Եկն երեւեցաւ սրբիչն տիեզերաց ինքն Յիսուս 'ի Յորդանան, մկրտեցաւ 'ի Յովհաննէ սրբելով զՋուրս. բացան նմա երկինք, 'ի վերուստ Հոգին Սուրբ աղաւնակերպ էջ 'ի վերայ նորա. վկայեցաւ 'ի հայրական ձայնէ Որդի սիրելի, և յայտնեցաւ աշխարհի Երրորդութեանն փառք Աստուածութեան։

Հերովդէս Անդիպաս չորրորդապետ աշխարհին Գալիլեացւոց, որդի մանկակոտոր Հերովդի մեծի, ոխացեալ ընդ Յովհաննու, զի ասէր յանդիմանէր զնա սակս զեղծ և անառակ վարուց, և կնոջն Հերովդիադայ եղբօր իւրոյ Փիլիպպոսի՝ զի բռնի յափշտակեալ էր զնա 'ի դայթակղութիւն բազմաց, վասն որոյ կալեալ կապեաց զնա և առաքեաց 'ի դղեակն Մաքերունդայ, յայնկոյս Յորդանանու, և 'ի բանտի անդ ետ գլխատել զնա։ Եւ աշակերտացն բարձեալ զմարմին նորա տարեալ թաղեցին 'ի Սեբաստիա Գալիլեացւոց, ուր էին դերեզմանք մարգարէիցն Եղիսէի և Աբդիու։ Յաւելու Նիկիփոր յոյն պատմիչ. թէ Հերովդիադա վասն երկիւղին պահեաց առ իւր զգլուխն Յովհաննու, զի մի գուցէ վերստին միասցի 'ի մարմին նորա և յարուցեալ յանդիմանեսցէ զինքն։ Տես վասն այսր, 'ի Վարս սրբոց, Հատ. Ա. երես 34։ Եւ Եւսեբ. Պատմ. Եկեղեցւոյ՝ Ա. 11։ (30)։

Այլ Յիսուս յետ մկրտութեանն վարեցաւ յանապատ՝ զաւուրս քառասուն փորձեալ 'ի սատանայէ, և յաղթեալ նմա, պաշտեցաւ 'ի հրեշտակաց։ Եւ ապա սկիզբն արար սերմանել զսերմն Աստուածեղէն վարդապետութեանն 'ի հոգիս բանաւորաց, ուսուցանելով զաստուածութիւն կենաց, յորդորելով 'ի պահպանութիւն Աստուածային օրինաց՝ գործովք բարեաց, եւ հաստատէր զնոսա մեծամեծ նշանօք և սքանչելեօք։ Սկիզբն նշանաց եղեւ 'ի հարսանիսն Կանայ՝ փոխեալ զՋուրն 'ի գինի. առաջին եւ երկրորդ անգամ յագեցոյց 4—5000 ժողովուրդս՝ որք լսէին զբանն կենաց. եբարձ զհիւանդութիւնս և զդեւս վերացոյց, կուրաց շնորհեաց տեսանել. սատեաց մահու և ետ արտաքս զաւար իւր զչորեքօրեայ. տարերք լուցին յաստուածային